ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"08" 02 2022թ. N 01/2876-2022

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար
Ա. Հարությունյանին
Պատճենը՝ «Հետք» թերթի լրագրող
Ռ.Գրիգորյանին

Ի կատարումն ՀՀ վարչապետի՝ 03.02.2022թ.
թիվ № 02/13.2/3257-2022 *հանձնարարականի*

Հարգելի՛ պարոն Հարությունյան

«Հետք» թերթի լրագրող Ռիմա Գրիգորյանի հարցման վերաբերյալ հայտնում ենք.

1. 2014թ. դեկտեմբերին Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ-ն ֆրանսիական Սադե բաժնետիրական ընկերության Հայաստանի մասնաճյուղի հետ կնքել է MDPIU-OPPW-14/3 Կապալի Պայմանագիր (**Fidic Red Book** դասի) Աերացիայի նոր կեղտաջրերի մաքրման կայան կառուցելու համար: Կապալի պայմանագրի կողմ է հանդիսացել Երևան քաղաքի ենթակայությամբ գործող <<Համայնքային զարգացման ԾԻԳ>> ՊՀ-ն, հետևաբար ֆինանսական հատկացումների վերաբերյալ Ջրային կոմիտեն որպես կողմ ներգրավված չլինելու կապակցությամբ չի կարող հստակ տեղեկատվություն տրամադրել: Պայմանագրին առնչվող ֆինանսական փաստաթղթերը հետագայում փոխանցվել են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին (ՀՏԶՀ):

2. Պայմանագրի վարկային միջոցների հատկացման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև 27.05.2008թ. կնքված ֆինանսական

արձանագրությունը, որտեղ հստակ շարադրված են վարկի պայմանները (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=82252): Վարկի մարման գործընթացի վերաբերյալ առավել ճշգրիտ տեղեկատվություն կարող է տրամադրվել պետական լիազոր մարմնի կողմից:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 31.08.2017թ. թիվ 1062-Ն որոշման համաձայն որոշում է կայացվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցնել «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ-ի գործունեությունը և իրավահաջորդ սահմանել «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ին: «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ-ի գործունեությունը փաստացի դադարեցվել է 27.12.2017թ.: ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 28-ի թիվ 170-Ն որոշման համաձայն, որոշում է կայացվել դադարեցնել «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի գործունեությունը: «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի գործունեությունը փաստացի դադարեցվել է 30.12.2019թ.: ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1966-Ն որոշմամբ կատարվել է փոփոխություն և լրացում 28.02.2019թ. թիվ 170-Ն որոշման մեջ: Համապատասխան փոփոխությամբ սահմանվել է, որ ՊՀ-ի կողմից մինչև որոշումն ուժի մեջ մտնելը կնքված և դեռևս գործողության մեջ գտնվող պայմանագրերը կշարունակվեն իրականացվել ՀՏՋՀ-ի կողմից:

4. Կապալի պայմանագրի շինարարական աշխատանքները մեկնարկել են 2015 թվականից և ավարտվել են Պայմանագրով նախատեսված ժամկետներում 2016թ, դեկտեմբերի 30-ին: Հիմնական շինարարական աշխատանքների ավարտի հիման վրա՝ համաձայն Fidic Red Book-ի կանոնակարգերի, հաջորդ աշխատանքային օրը՝ 11.01.2017թ. Ծրագրի Ինժեները <<Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ-ին է ներկայացրել Ծրագրով նախատեսված շինմոնտաժային աշխատանքների ավարտման մասին Ծանուցում (TAKING OVER CERTIFICATE), որի 6-րդ կետում արձանագրել է, որ շինարարական աշխատանքների վերջին փուլում առկա են թերություններ, որոնք ենթակա են շտկման: Քանի որ վերոնշյալ ԿՄԿ-ն ներառված չի եղել Վարձակալության պայմանագրով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ին հանձնված կայանների ցանկում, ուստի 2017թ. հունվարի 1-ից ընկերությունն իրականացնում է միայն Աերացիայի հին կայանի սպասարկումը:

ԿՄԿ-ի վերակառուցման առաջին փուլի կապալի վերոնշյալ Պայմանագիրը դեռևս չի կարող համարվել որպես <<ավարտված պայմանագիր>>, քանի որ սահմանված կարգով ավարտին չեն հասցվել FIDIC Red Book դասի կապալի պայմանագրի տեխնիկական մասնագրերով սահմանված բոլոր փուլերը, իսկ Ծրագրի ինժեների ծանուցումը նախատեսված շինմոնտաժային աշխատանքների ավարտի մասին (TAKING OVER CERTIFICATE) դեռևս չի կարող հիմք ընդունվել Պայմանագրի ավարտի համար:

Տեղեկացնում ենք նաև,որ 1-ին կետի հետ կապված լրացուցիչ տեղեկություն ստանալու համար դիմել ենք ՀՏԶՀ-ին,որի մասին լրացուցիչ կտեղեկացվի:

08.02.2022

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069

Գ. Սանոսյան

Կատարող՝ Տարոն Ղազարյան
Հասարակայնության հետ կապերի բաժնի խորհրդական՝
առանձին գործառույթներ համակարգող
հեռ.՝/010/515-110